Հաստատում եմ
Նաիրի համայնքի ղեկավար
_____ Ն. Սարգսյան
<<31>> հուլիս 2025թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/6>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի կարիքների համար Քասախ բնակավայրի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 4-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/5>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով տասը հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	Lilit87_95@rambler.ru հեռ. 093-50-08-01	000264646

6. Հայտով ներկայացված գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1				
1	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	255 000 000	51 000 000	306 000 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 25-ի թիվ 3 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<Լիլիթ-87>> ՍՊԸ –ն:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/6>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1

2025 թվականի հուլիսի 30-ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ <<Լիլիթ-87>> ՍՊԸ-ի, որը գտնվում է գ. Զովունի 1-ին փողոց 127 հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի Քասախ բնակավայրի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/6>>:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 306 000 000 (երեք հարյուր վեց հազար) ՀՀ դրամ:

Պայմանագիրը ուժի մեջ կմտնի ֆինանսական միջոցներ հատկացնելուց և կողմերի միջև համաձայնագիր կնքելուց հետո:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)